



ԽՈՐԱՅՐԵՔ ԶԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

Ինչ է աղմուկը

Աղմուկը մարդու կողմից ընկալվում է 20–20000Հց (մարդու ականջին ընկալելի տիրույթ) հաճախությամբ և շուրջ 130 դեցիբել ուժգնությամբ ոչ ներդաշնակ (չկարգավորված) ձայնային տատանումների ձևով: Ձայնի ինտենսիվությունը կամ հզորության չափը որոշվում է Վարպերով՝ 1ւ² մակերեսի վրա, (Նկ. 4,7,...) իսկ ալիքի երկարությունը կամ Ձայնային ալիքի տատանման հաճախությունը արտահայտվում է Հերցերով (Հց):

Արտադրական աղմուկը լինում է մեխանիկական, հարվածային և աերոդինամիկական: Աղմուկի աղբյուրներ են ամենատարբեր շարժվող օբյեկտները, որոնց ազդեցությանը մարդիկ ենթարկվում են արտադրական միջավայրում, փոխադրամիջոցներում, փողոցում և կենցաղում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ըստ շրջակա միջավայրի վրա ունեցած վնասակարության աստիճանի աղմուկը քիմիական աղտոտումից հետո գրավում է երկրորդ տեղը: Աղմուկի մշտական ազդեցությանը ենթարկվող մարդիկ շուրջ են հոգնում, հաճախ նրանց մոտ նկատվում է առողջական խանգարումներ (շնչարգելություն, սրտի շրջակայքում ցավեր և սրտի զարկերի արագացում, արյան ճնշման անկայունություն, հոգեկան խանգարումներ, աղեստամոքսային տրակտի գործունեության փոփոխություններ և այլն): Աղմուկի ազդեցության տակ ի հայտ եկող այս նշանները դիտվում են որպես «Աղմկային հիվանդություն»:

Մարդու օրգանիզմի վրա հատկապես վնասակար ազդեցություն ունեն աղմուկի ինտուլսային և ինֆրաձայնային աղբյուրները: Մինչև 16Հց հաճախության և 75–85դբ ուժգնության տիրույթի տատանումներն առավել դժվարացնում են աշխատանքի, հանգստի և ընդհանուր կյանքի պայմանները: Այսպես, 7Հց հաճախությամբ ինտենսիվ ինֆրաձայները, որոնք համընկնում են այսպես կոչված ‘նոդեղի ալֆա-ռիթմի’ հետ, կարող են առաջացնել մարդու առողջության ֆունկցիոնալ լուրջ խախտումներ: Այդպիսի աղմուկը հատուկ է արտադրությանը, տրանսպորտին, կենցաղային սարքերին (փոշեկուլ, լվացքի մեքենա, գերցածր հաճախության երաժշտական գործիքներ): Մարդու ականջի ընկալման սահմանին մոտիկ ինֆրաձայնը (16 Հերցից փոքր) և ուլտրաձայնը (20000 Հերցից մեծ) թուլացնում են լսողական ապարատի ֆունկցիան: Նրանց ներգործության դեպքում ներքին ականջը պատասխան ռեակցիա է ցուցաբերում՝ ժամանակավորապես «խլանում է», իսկ տրական ազդեցությունից հետո վիճակը կարող է անգամ չվերականգնվել:

Թրթռոցի (վիբրացիա) ազդեցությունը և նրա վտանգավոր չափաբաժինը:

Եթե աղմուկը ձայն է, որն ունի չկարգավորված քառասային բնութագիր, ապա թրթռոցը պինդ մարմնի տատանումն է, որն ազդում է մարդու վերջույթների, հենարանային-շարժողական ապարատի, և ընդհանրապես ամբողջ օրգանիզմի վրա: Այն բնութագրվում է արագությամբ (մ/վրկ) և արագացմամբ (մ/վրկ²):

Հասարակված է, որ մարդու սրամոքսն ու գլուխը առանձնապես հիվանդագին են արձագանքում որոշակի՝ 6-8Հց հաճախություններին: Աշխատանքի ընթացքում թրթռոցի երկարատև ազդեցությունն առաջացնում է պրոֆեսիոնալ կամ «Թրթռոցային հիվանդություններ» (սրամոքսի խոցը, հոգեկան և նյարդային խանգարումները, հիպերտոնիան):

Տարբերում են ընդհանուր և տեղային թրթռոցներ: Ընդհանուր թրթռոցի սանիտարական նորմերը բաժանվում են 3 կարգի: Առաջին կարգին դասվում է ինքնագնաց և կցասայլերով փոխադրամիջոցների թրթռոցը, որն անընդհատ ազդում է այդպիսի մեքենաների վրա աշխատող մարդու վրա: Երկրորդ կարգին դասվում է շինարարական վերամբարձ կոունկների, էքսկավատորների, լեռնային կոմբայնների թրթռոցը: Երրորդ կարգի թրթռոց է համարվում դարբնոցա-մամլիչային սարքավորումների աշխատանքի ժամանակ առաջացած թրթռոցը, որն առաջ է բերում շինության հարակի և պատերի թրթռոց:

Էլեկտրամագնիսական ճառագայթման ազդեցությունը և չափորոշիչները

Տեխնիկական առաջընթացի պայմաններում մարդու համար վնասակար արտաքին ազդեցության գործոն են համարվում տարբեր հաճախության և ինտենսիվության էլեկտրամագնիսական ճառագայթումները: Նրանց աղբյուրները բազմազան են՝ բարձր լարման փոփոխական էլեկտրական հոսանքի ցանցերն ու հաղորդալարերը, ռադիոհեռուստատեսային կայանները, բջջային հեռախոսակալը, ռադիոտեղորոշիչ կայանները, հզոր էլեկտրաշարժիչները և այլն:

Սանիտարական կանոնների համաձայն էլեկտրամագնիսական ճառագայթման գոյում մշտական բնակությունն արգելվում է:

Շրջակա միջավայրի ջերմային աղտոտման առանձնահատկությունները

Ֆիզիկական ազդեցությունների շարքին է դասվում շրջակա բնական

միջավայրի ջերմային աղբյուրում: Դա կապված է այն ձեռնարկությունների գործունեության հետ, որտեղ օգտագործվում է մեծ քանակությամբ ջուր՝ աշխատող մեքենաների, սարքավորումների, արտադրանքի սառեցման և տեխնոլոգիական պրոցեսների ապահովման համար: Այդպիսիք են էլեկտրակայանները, ատոմային ռեակտորները, մետալուրգիական և ձուլման արտադրությունները, հզոր շարժիչները և տուրբինները: Ջերմոցային էֆեկտն ակտիվ աճնող նյութերից մեկը մթնոլորտում ջրային գոլորշին է, որն արտանետվում է հենց այս աղբյուրներից:

Մոլորակի վրա ջերմային աղբյուրման հզոր աղբյուր են համարվում նաև հրդեհները, որոնք զգալի քանակությամբ ջերմություն են արտանետում շրջակա միջավայր՝ ծախսելով մեծ քանակով թթվածին, արտանետելով ածխաթթու գազ և զանազան թունավոր նյութեր: